

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Բազարան համայնքի ղեկավարի 2013թ.-ի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից պարտադիր լիազորությունների իրականացման շարքում տեղ են գրադեցրել քաղաքացիների կողմից բարձրացրած դիմումների և բողոքների ընթացք տալը, ինչպես նաև համայնքի ղեկավարի մոտ անհատական ընդունելություն կազմակերպելը:

Ֆինանսների բնագավառում մշակվել և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի բյուջեի նախագիծը: Համայնքի բյուջեն ունեցել է հետևյալ կառուցվածքը՝

### Ե Կ Ա Ս ՈՒ Տ Ն Ե Ր

Վարչական բյուջե	(հազ.դրամ)	Ֆոնդային բյուջե (հազ.դրամ)
Հողի հարկ	2400.0	
Գույքահարկ	652.1	
Հողի վարձավճար	300.0	
Դոտացիա	6163.7	
Սուբվենցիա	250.6	
Տարեսկզբի ազատ մնացորդ Ֆոնդայինբյուջե		4678.5
Ն.տ. համայք ֆոնդ. ֆին. նպ.հատկ.գումար		90.0
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>9766.4</b>	<b>4768.5</b>

### Ծ Ա Խ Ս Ե Ր

Վարչական բյուջե	(հազ.դրամ)
Աշխատավարձ	6170.0
Էլեկտրոէներգիայի վարձ	106.6
Տեղեկատվական ծառայություն	100.0
Ներքին գործուղումներ	200.0
Գրասենյակային նյութեր	250.0
Տրանսպորտային նյութեր	800.0
Աղբահանում	400.0
Համակարգչային ծառայություն	50.0
Սոց. հատուկ արտոնություն	800.0
Պահուստային ֆոնդ	889.8
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>9766.4</b>

Ֆոնդային բյուջե	
Կապիտալ շինարարություն	4083.4
Մեքենայի կապիտալ վերանորոգում	595.1

ԸՆԴԱՄԵՆԸ 4678.5

2013թ-ի 1-ին կիսամյակում բյուջեի կատարողականը հետևյալն է՝

### Ե Կ Ա Ս Ո Ւ Տ Ն Ե Ր

Վարչական բյուջե

Պլանային	Փաստացի	Կատարող
(հազ.դրամ)	(հազ.դրամ)	(%)
Հողի հարկ	2400.0	108.8
Գույքահարկ	652.1	81.4
Հողի վարձավճար	300.0	74.3
Դոտացիա	6163.7	100.0
Սուբսիդիա	250.6	100.0
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>9766.4</b>	<b>100.1</b>

### Ծ Ա Խ Ա Ե Ր

Վարչական բյուջե

Պլանային	Փաստացի	Կատարող
(հազ.դրամ)	(հազ.դրամ)	(%)
Աշխատավարձ	6170.0	80.7
Էլեկտրոէներգիայի վարձ	106.6	75.0
Ներքին գործուղումներ	200.0	100.0
Տեղեկատվական ծառայութ.	100.0	66.0
Համակարգչային ծառայութ.	50.0	100.0
Գրասենյակային նյութեր	250.0	100.0
Տրանսպորտային նյութեր	800.0	100.0
Աղբահանում	400.0	100.0
Սոց. հատուկ արտոնություն	800.0	50.0
Պահուստային ֆոնդ	889.8	0
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>9766.4</b>	<b>90.3</b>

## Ե Կ Ա Ս ՈՒ Տ Ն Ե Ր

### Ֆոնդային բյուջե

	Պլանային (հազ.դրամ)	Փաստացի (հազ.դրամ)	Կատարող (%)
Տարեսկզբի ազատ մնացորդ	4678.5	4768.5	100.0

## Ծ Ա Խ Ս Ե Ր

### Ֆոնդային բյուջե

	Պլանային (ոազ.դրամ)	Փաստացի (հազ.դրամ)	Կատարող (%)
Կապիտալ շինարարություն	4083.4	1000.0	24.5
Մեքենայի կապիտալ վերանորոգում	595.1	595.1	100.0
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>4678.5</b>	<b>1595.1</b>	<b>34.1</b>

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի ղեկավարը պատասխանատու է բյուջեի կատարման համար, ուստի տարվա կտրվածքով հաղորդումներ է ներկայացվել ավագանուն բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ: Աջակցություն է ցուցաբերվել գինձառայողների, պատերազմի վետերանների ընտանիքների սոցիալական խնդիրների լուծմանը: Այս բնագավառում աջակցություն է ցուցաբերվել գինկոմիսարիատի և մարզային զորակոչային հանձնաժողովին ժամկետային գինձառայողների զորակոչի կազմակերպման և անցկացման հարցում:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի տարածքում ամիսը 2 անգամ իրականացվել է աղբահանություն:

Որպես կանոն համայնքային ենթակայություն ունեցող բուժական ամբուլատորիան իրականացրել է բոլոր նախատեսված պատվաստումները և անհրաժեշտության դեպքում բոլոր հիվանդներին առաջին բուժ օգնությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում սոցիալական նշանակություն ունեցող խնդիրների շարքում կարևոր նշանակություն է ունեցել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական օգնություն տրամադրելու հարցը:

Համայնքի ավագանու որոշմամբ համայնքի թվով 36 ընտանիքների իրենց դիմումների համաձայն հատկացվել է 800.0 հազ.դրամ դրամական օգնություն:

Որպես պատվիրակած լիազորություն համայնքի ղեկավարը կազմակերպել է համայնքի տարածքում գտնվող անասնաբուժական ծառայության գործունեությունը կենդանիների հիվանդությունների կանխարգելման և ագրարային կանոնների պահպանման հետ կապված:

Գյուղապետարանը ջրայի ընկերության «Շենիկ» ՋՕԸ-ի հետ համագործակցելով կարգավորել է գյուղացիական տնտեսություններին ոռոգման ջրի մատակարարումը:

Դեռևս համայնքում կան բազմաթիվ չլուծված խնդիրներ, որոնք անհրաժեշտ են համայնքի համար.

1. Մանկապարտեզի շենքի կառուցում:
2. Բուժ-ամբուլատորիաի շենքի կառուցում:

3. Խմելաջրի ցանցի կառուցում:
4. Մշակույթի տան կապիտալ վերանորոգում:
5. Ճանապարհների կապիտալ վերանորոգում:
6. Գազաֆիկացում:

ՀՀ Արմավիրի մարզի Բազուման հ/հ



Գ. Մարգարյան